

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 1 / 17

ՆՊԱՏԱԿԸ

Children’s Hospital Los Angeles-ը («**CHLA**») ընդունում է, որ մեր համայնքում շատ մարդկանց համար պահանջվում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ առողջապահական ծառայություններ, սակայն ապահովագրված չեն, ոչ բավարար են ապահովագրված, իրավասու չեն պետական առողջապահական ծրագրերին կամ պարզապես չունեն համապատասխան ֆինանսական միջոցներ՝ առողջապահական ծառայությունների համար վճարելու համար: CHLA-ն պարտավորվում է իր ֆինանսական հնարավորությունների չափով մատչելի դարձնել բժշկական անհրաժեշտ ծառայությունները անվճարունակ մարդկանց համար: Որպեսզի CHLA-ն իր ռեսուրսները պատասխանատու կերպով կառավարի և կարողանա անհրաժեշտ մակարդակի օգնություն ցուցաբերել կարիքավոր անձանց, CHLA-ն ընդունել է հետևյալ ուղեցույցները բարեգործական խնամքի և Չեղչված խնամքի («**Ֆինանսական օգնություն**») տրամադրման համար: Ըստ այդմ, այս ապահովագրության նպատակն է նկարագրել.

- Սույն ապահովագրության շրջանակներում Ֆինանսական օգնություն ստանալու համար իրավասության չափանիշները և դիմելու գործընթացը,
- Այն գումարների սահմանաչափերը, որոնք CHLA-ն կգանձի շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ այլ խնամքի համար, որը տրամադրվում է սույն ապահովագրության իրավասու անձանց,
- Սույն ապահովագրության համաձայն Ֆինանսական օգնության համար իրավասու հիվանդներից գանձվող գումարների հաշվարկման հիմքը, և
- Ինչպես է CHLA-ն հանրայնացնելու ապահովագրությունը հիվանդանոցի կողմից սպասարկվող համայնքում:

CHLA-ի պարտավորությունն այս ապահովագրությանը չի փոխարինում անձնական պատասխանատվությանը: Դրա փոխարեն՝ ակնկալվում է, որ պացիենտները և նրանց ընտանիքի անդամները կհամագործակցեն Ֆինանսական օգնություն ստանալու համար նախատեսված և / կամ երրորդ անձանց վճարման, և իրենց խնամքի ծախսերին նպաստելու համար CHLA-ի ընթացակարգերի հետ՝ ըստ իրենց վճարունակության : Առողջության ապահովագրություն ձեռք բերելու ֆինանսական հնարավորություններ ունեցող անձանց խրախուսում ենք դա անել, որպեսզի ապահովեն առողջապահական ծառայությունների հասանելիությունը և իրենց անհատական ակտիվները պաշտպանելու համար:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 2 / 17

ԾՐՋԱՆԱԿԸ՝

Այս ապահովագրությունը կիրառելի է բոլոր պացիենտների/երաշխավորների համար, ովքեր վճարային հաշիվներ ունեն CHLA հաստատությունից:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.

1. «**Բարեգործական խնամք**» նշանակում է պացիենտի ազատում ֆինանսական պարտավորությունից CHLA-ի կողմից մատուցած ծառայությունների համար գանձումների ողջ գումարի համար:
2. «**Աղքատության դաշնային մակարդակի կիրառելի պարամետրեր**» նշանակում է (i) Բարեգործության համար՝ 400% կամ ցածր, կամ (ii) 600% կամ ցածր Չեղջի համար:
3. «**Չեղչված խնամք**» նշանակում է որ պացիենտին կառաջարկվի զեղչ CHLA-ի մնացորդի զեղչ, որը վճարվում է CHLA-ի կողմից մատուցված ծառայությունների համար:
4. «**Ծտապ օգնության բժիշկ**» նշանակում է բժիշկ, ով հավատարմագրված է որևէ հիվանդանոցի կողմից և ունի պայմանագիր հիվանդանոցի հետ՝ հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքում շտապ բժշկական ծառայություններ մատուցելու համար:
5. «**Աղքատության դաշնային մակարդակ**» նշանակում է աղքատության վերաբերյալ ուղեցույցներ, որոնք պարբերաբար թարմացվում են Դաշնային ռեգիստրում ԱՄՆ Առողջապահության և սոցիալական ծառայությունների նախարարության կողմից: Ընթացիկ ուղեցույցներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ <http://aspe.hhs.gov/POVERTY/>:
6. «**Ընտանիքի համախառն ամսական եկամուտ**» նշանակում է ընտանիքի կողմից ստացված ընդհանուր փոխհատուցումը մինչև հարկերը, կրճատումները և ալիմենտի և երեխայի աջակցման համար կատարված վճարումը: Այսպիսի եկամուտի մեջ մտնում են մի շարք աղբյուրներից ստացված փոխհատուցումները, ինչպիսիք են աշխատավարձերը, բոնուսները, որոնք ստացվում են աշխատանքից կամ ինքնագրավածությունից, շահաբաժինները և բաշխումները , որոնք ստացվում են ներդրումներից, վարձակալության կտրոնները անշարժ գույքի ներդրումներից, ձեռնարկության

**Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:*

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 3 / 17

շահույթի համօգտագործումը և այլն: Տարեկան եկամուտը կարող է որոշվել՝ հաշվելով Ընտանիքի տարեկան եկամուտը տարվա սկզբից մինչև ընթացիկ ամսաթիվը:

7. «Ընտանիք» նշանակում է. (i) 18 տարեկան և ավելի բարձր տարիքի պացիենտի համար, պացիենտը և պացիենտի ամուսինը, կողակիցը և մինչև 21 տարեկան խնամակալության տակ գտնվող երեխաները, անկախ նրանից՝ ¹ապրում են տանը, թե ոչ, և (ii) մինչև 18 տարեկան պացիենտի համար՝ այդ պացիենտի ծնողը, խնամող հարազատները և ծնողի կամ խնամող ազգականի մյուս երեխաները, ովքեր 21 տարեկանից փոքր են:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.

1. Սույն ապահովագրությամբ իրավասու ծառայություններ

- A. CHLA-ն ֆինանսական օգնություն է առաջարկում հիվանդանոցի կողմից մատուցվող առողջապահական ծառայությունների հետևյալ տեսակների համար.
- i. Շտապ օգնության բժշկական ծառայություններ, և
 - ii. Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները, որոնք նշված են հետագոտող բժշկի կողմից:
- B. Այնուամենայնիվ, համաձայն CHLA-ի քաղաքականության՝ առանց խտրականության խնամք է տրամադրվում շտապ օգնության անհրաժեշտության իրավիճակներում, ինչպես սահմանված է Արտակարգ իրավիճակների բուժօգնության և ընթացիկ ծննդաբերության մասին օրենքում (EMTALA), բոլոր անհատներին՝ անկախ սույն ապահովագրության շրջանակներում նրանց ունեցած իրավասությունից: EMTALA-ի քաղաքականությունն ու ընթացակարգերը ավելի մանրամասն ներկայացված են CHLA-ի մեկ այլ ապահովագրության կամ քաղաքականության մեջ: CHLA-ն չի իրականացնում այնպիսի գործողություններ, որոնք թույլ չեն տալիս անհատներին

¹ «Կողակից» տերմինը սահմանված է Կալիֆորնիայի ընտանեկան օրենսգրքի 297-րդ բաժնի կողմից:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Ռոալի բարեխաղման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 4 / 17

շտապ բժշկական օգնություն ստանալ, օրինակ՝ պահանջելով, որ շտապօգնության բաժանմունքի հիվանդները վճարեն մինչև շտապ բուժօգնություն ստանալը կամ թույլ տալով պարտքերի հավաքագրման գործողություններ, որոնք առանց խտրականության խոչընդոտում են շտապ բժշկական օգնության տրամադրմանը:

- C. Բացի հենց CHLA-ից, այն ծառայություն մատուցողները, որոնք բուժօգնության ծառայություններ են մատուցում CHLA-ի հաստատություններում, չեն հետևում այս ապահովագրությանը: Բժիշկները, վիրաբույժները և այլ ծառայություն մատուցողները, ովքեր աշխատում են Children’s Hospital Los Angeles Medical Group-ի («CHLAMG»), Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում («USC») և USC Care-ում, CHLA-ի աշխատակիցներ չեն հանդիսանում. և թեև նրանց ծառայությունները իրավասու չեն CHLA ապահովագրության շրջանակներում ֆինանսական օգնության համար, նրանք կարող են առաջարկել ֆինանսական օգնություն՝ CHLAMG-ի կիրառելի ապահովագրության շրջանակներում: Բացի այդ, CHLAMG-ն ունի իր սեփական ապահովագրությունը՝ կապված չապահովագրված հիվանդների կամ մեծ բժշկական ծախսեր ունեցող հիվանդների համար շտապ բուժօգնության զեղչված ծառայությունների հետ: Այս ապահովագրության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Pediatric Management Group-ի հաճախորդների սպասարկման կենտրոն՝ (323) 361-2336 հեռախոսահամարով: Բացի CHLAMG-ից, USC-ից և USC Care-ից, CHLA-ի այլ հաստատություններում խնամք տրամադրող ծառայություն մատուցողները, նշված են սույն ապահովագրության Հավելված Ա-ում: Հավելվածը հասանելի է <https://www.chla.org/financial-assistance> կայքում, իսկ թղթային օրինակները կարող եք ձեռք բերել հիվանդանոցի գլխավոր մուտքի մոտ գտնվող Ընդունարանի տարածքից, Շտապ օգնության բաժնի ընդունարանի տարածքից, որը գտնվում է 4650 Sunset Blvd, Los Angeles, CA 90027 հասցեում կամ զանգահարելով Պացիենտների բիզնես ծառայություններ՝ (800) 404-6627 հեռախոսահամարով:

2. Պացիենտի իրավասության չափանիշները

Կարող են իրավասու լինել այն պացիենտները, ովքեր ի վիճակի չեն վճարել բժշկական անհրաժեշտ խնամքի ամբողջ արժեքը կամ դրա մի մասը: Ֆինանսական օգնության (Բարեգործական խնամքի և զեղչված խնամք) իրավասությունը կսահմանվի պացիենտի ֆինանսական կարիքի

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 5 / 17

անհատականացված գնահատման հիման վրա՝ սույն քապահովագրության համաձայն:
Իրավասության որոշում կայացնելիս՝ CHLA-ն հաշվի չի առնում տարիքը, սեռը, ռասան, սոցիալական կամ ներգաղթային կարգավիճակը, սեռական կողմնորոշումը կամ կրոնական պատկանելությունը:

- A. Այն դեպքում, երբ պացիենտը նախընտրում է չօգտագործել իր երրորդ կողմի մասնավոր առողջապահական ապահովագրությունը և դրա փոխարեն բուժվում է կանխիկ վճարի դիմաց, ապա նա իրավասու չէ ֆինանսական օգնությանը:
- B. Պացիենտները կանցնեն միջոցների ստուգում: Ընտանիքի համախառն ամսական եկամուտը կստուգվի եկամտի փաստագրված ապացույցի կամ էլեկտրոնային եղանակով ստուգման միջոցով: Եկամուտների շեմը հետևյալն է.
- i. FPL մակարդակին հավասար կամ 400%-ից ցածր եկամուտ. Այս պացիենտները իրավասու են լիարժեք ֆինանսական օգնության և/կամ դեղատնից իրաժարվելու, եթե պացիենտը 100%-ով պատասխանատու է իր պարգևատրման տևողության ընթացքում:
 - ii. Վերոնշյալ եկամուտը 400%, բայց FPL մակարդակին հավասար կամ 600%-ից ցածր եկամուտ. Այս պացիենտները կարող են զեղչ ստանալ պացիենտի պարտավորության գումարի նկատմամբ՝ բժշկական ծառայությունների համար պարգևատրման տևողության ընթացքում:
 - iii. Այն պացիենտները, որոնց Ընտանիքի համախառն ամսական եկամուտը չի համապատասխանում Աղքատության դաշնային մակարդակի կիրառելի պարամետրերին, իրավունք չունեն ստանալ ֆինանսական օգնություն՝ այս ապահովագրության շրջանակներում:
- C. CHLA-ն կարող է բացառապես իր հայեցողությամբ և կախված յուրաքանչյուր գործի փաստերից և հանգամանքներից, այնուամենայնիվ, շնորհել ֆինանսական օգնություն այն պացիենտներին, ովքեր այլ կերպ իրավասություններ չունեն սույն ապահովագրության շրջանակներում:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Ռոսկի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 6 / 17

3. Դիմելու գործընթացը

- A. Դիմելու ընթացքում պետք է արտացոլվեն CHLA-ի մարդկային արժանապատվության և խնամակալության արժեքները ֆինանսական կարիքների որոշման և Ֆինանսական օգնության տրամադրման մեջ:
- B. Ֆինանսական օգնության համար դիմում ներկայացնելու համար լրացված դիմումի ձևը և պահանջվող փաստաթղթերը պետք է անձամբ ներկայացվեն CHLA-ի ընդունելության բաժին կամ փոստով ուղարկվեն Պացիենտների բիզնես ծառայություններ հետևյալ հասցեով՝ Mailstop 26, Children’s Hospital Los Angeles, 4650 Sunset Boulevard, Los Angeles, California 90027: Խնդրում ենք անդրադառնալ Հավելված FIN - 006.1 CHLA Ֆինանսական օգնության դիմումին: Դիմումները կարող են կազմվել պացիենտի կամ ընտանիքի անդամի կողմից, մոտ ընկերոջ կամ պացիենտի հետ համագործակցող անձի կողմից՝ գաղտնիության մասին գործող օրենքների համաձայն: Դիմումը, CHLA-ի ֆինանսական օգնության քաղաքականության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ՝ կապվելով CHLA-ի Պացիենտների բիզնես ծառայությունների գրասենյակի ներկայացուցիչների հետ՝ (800) 404-6627 հեռախոսահամարով: **CHLA-ի աշխատակիցները չեն կարող օգնել լրացնել Ֆինանսական օգնության դիմումը, սակայն դիմումի հետ կապված օգնություն կարող եք ստանալ Լոս Անջելեսի Առողջապահական սպառողների կենտրոնից: Այս հասարակական կազմակերպությունը գտնվում է 13327 Van Buys Boulevard, Pacoima, CA 91331 հասցեում, հեռախոսահամար՝ (800) 896-3203:**
- C. Նախընտրելի է, բայց չի պահանջվում, որ Բարեգործական խնամքի կամ Զեղչված խնամքի խնդրանքը և ֆինանսական կարիքների որոշումը պատրաստ լինեն նախքան ոչ շտապ բուժօգնության ծառայությունների մատուցումը: Սակայն իրավասության որոշումը կարող է կատարվել հավաքման ցիկլի ցանկացած կետում: Ֆինանսական օգնության իրավասությունը պետք է վերազնահատվի ամեն հաջորդ անգամ ծառայություններ մատուցելիս, եթե վերջին ֆինանսական գնահատումն արվել է ավելի քան մեկ տարի առաջ, կամ երբ հայտնի են դառնում հիվանդի իրավասությանը վերաբերող լրացուցիչ տեղեկություններ:
- D. Ֆինանսական օգնություն ստանալու համար պացիենտի իրավասության որոշումը կարող է հետաձգվել մինչև CHLA-ն չստանա սույն ապահովագրության կամ Ֆինանսական օգնություն

**Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:*

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 7 / 17

ստանալու դիմումի մեջ նշված բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը: Ակնկալվում է, որ դիմողը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը՝ CHLA-ին տրամադրելու այս ապահովագրության և դիմումի շրջանակներում պահանջվող տեղեկությունները: Դիմողները 30 օր ունեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու համար: Եթե դիմումը լրացված չէ, Պացիենտների բիզնես ծառայությունների բաժինը կփորձի հեռախոսով կապվել դիմողի հետ՝ պահանջվող տեղեկությունները ստանալու համար: Եթե Պացիենտների բիզնես ծառայությունների բաժինը մեկ շաբաթվա ընթացքում չկարողանա հեռախոսով կապվել դիմողի հետ, ապա նամակ կուղարկվի դիմողին՝ իր վերջին նշված հասցեով՝ խնդրելով պահանջվող տեղեկությունները: Նամակը կլինի անգլերենով և այն լեզվով, որով խոսում է պացիենտի ընտանիքը: Եթե հայտատուից պատասխան չլինի բացակայող տեղեկությունները պահանջող նամակը ուղարկելուց 30 օր հետո, CHLA-ն կարող է հայտը համարել չեղարկված և կարող է մերժել դիմումը:

- i. Բարեգործական խնամքի կամ Չեղչված խնամքի համար բոլոր հայտատուներից կարող են պահանջվել վերջին վճարման անդորրագրերը և/կամ եկամտահարկի հայտարարագրերը: CHLA-ն եկամտի այլ փաստաթղթեր չի պահանջի:
 - i. Կարող են պահանջվել այլ փաստաթղթեր, որոնք նշված են Ֆինանսական օգնության դիմումում: CHLA-ն, բացի Ֆինանսական օգնություն խնդրող հիվանդից (կամ նրա ներկայացուցիչներից), այլ աղբյուրներից ստացված տեղեկություններ չի օգտագործում, որպեսզի որոշում կայացնի սույն ապահովագրության շրջանակներում Ֆինանսական օգնության համար հիվանդի իրավասության վերաբերյալ:
- E. Ֆինանսական օգնություն ստանալու ամբողջական դիմումները պետք է անհապաղ դիտարկվեն, և CHLA-ն պետք է գրավոր տեղեկացնի հայտատուին ամբողջական դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում՝ արդյոք հայտատուն իրավասու է Բարեգործական խնամքի կամ Չեղչված խնամքի համար:
- F. Այն դեպքում, երբ Պացիենտների բիզնես ծառայությունների բաժինը մերժում է ֆինանսական օգնությունը հայտատուին, հայտատուն կարող է պահանջել այդ որոշման վերանայում՝ դիմելով Պացիենտների ֆինանսական ծառայությունների տնօրենին, ով կվերանայի գործը CHLA-ի Գլխավոր ֆինանսական տնօրենի հետ: Գլխավոր ֆինանսական տնօրենի որոշումը հայտատուի իրավասության վերաբերյալ վերջնական կլինի:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 12/01/2022	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 8 / 17
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0			

G. Այն փաստը, որ հիվանդը դիմել է կամ սպասման վիճակի մեջ դիմում ունի մեկ այլ առողջապահական ծրագրի համար այն պահի դրությամբ, երբ հիվանդը դիմում է Բարեգործական խնամքի կամ Չեղչված խնամքի համար CHLA-ում, չի բացառի ոչ մի ծրագրի համար դիմելու հնարավորությունը:

4. Ֆինանսական օգնության չափը

Սույն ապահովագրության շրջանակներում իրավասու հիվանդներին տրամադրվող ֆինանսական օգնության տեսակները հետևյալն են.

- A. Բարեգործական խնամք. Հիվանդներ, որոնց Ընտանիքի համախառն ամսական եկամուտը համապատասխանում է կամ ցածր է Դաշնային աղքատության մակարդակի 400%-ից և, ովքեր համապատասխանում են սույն ապահովագրության մյուս պահանջներին, իրավունք ունեն ստանալ Բարեգործական խնամք (հիվանդի ֆինանսական պարտավորությունից հրաժարվելը CHLA-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց՝ համախառն վճարների ամբողջ գումարի հետ կապված):
- B. Չեղչված խնամք. Հիվանդներ, որոնց Ընտանիքի ամսական համախառն եկամուտը գերազանցում է 400%-ը, սակայն համապատասխանում է Դաշնային աղքատության մակարդակի 600%-ին կամ ցածր է դրանից, և ովքեր համապատասխանում են այս ապահովագրության մյուս պահանջներին, իրավասու են ստանալ ծառայություններ CHLA-ից զեղչված գներով, որպեսզի զեղչից հետո նրանց պարտավորության գումարը չգերազանցի այն գումարները, որոնց հաշիվը ընդհանուր առմամբ ներկայացվում է ապահովագրություն ունեցող հիվանդներին («**Ընդհանուր ներկայացված հաշիվներ կամ AGB**»): AGB-ի հաշվարկի մանրամասները ներառված են սույն ապահովագրության Հավելված Բ-ում: Հավելվածը հասանելի է <https://www.chla.org/financial-assistance> կայքում, իսկ թղթային օրինակները կարող եք ձեռք բերել X հիվանդանոցի գլխավոր մուտքի մոտ գտնվող Ընդունարանի տարածքից, Շտապ օգնության բաժնի ընդունարանի տարածքից, որը գտնվում է 4650 Sunset Blvd, Los Angeles, CA 90027 հասցեում կամ զանգահարելով Պացիենտների բիզնես ծառայություններ՝ (800) 404-6627 հեռախոսահամարով:

**Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:*

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 9 / 17

5. Ֆինանսական օգնության ուժի մեջ մտնելու ամսաթիվը

- A. Ֆինանսական օգնության ծրագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը սկսվում է դիմումի հաստատման օրվանից և հետին ամսաթիվը ներառում է ծառայության ժամկետները մեկ օրացուցային տարի ժամկետով:

6. Հաշիվների ներկայացման քաղաքականության հետ կապված հարաբերություններ

- A. Ընդունող հանձնաժողովը պետք է փորձի ստանալ յուրաքանչյուր պացիենտից կամ նրա ներկայացուցչից տեղեկություններ այն մասին, թե արդյոք մասնավոր կամ հանրային առողջության ապահովագրությունը կամ հովանավորությունը կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարել CHLA-ի կողմից հիվանդին ցուցաբերվող խնամքի վճարները, ներառյալ, բայց չսահմանափակվելով, մասնավոր առողջապահական ապահովագրությունը, ապահովագրություն, որը հասանելի է California Health Benefit Exchange-ի, Medicare-ի, Medi-Cal-ի, Healthy Families ծրագրի, California Children’s Services ծրագրի կամ վարչաշրջանի կամ պետության կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի միջոցով, որոնք նախատեսված են առողջապահական ապահովագրություն տրամադրելու համար: Ընդունող հանձնաժողովը կօգնի նաև մարդկանց որոշել, թե արդյոք կա վարչաշրջանային հիվանդանոց, որտեղ մարդիկ աշխատում կամ բնակվում են, որը կարող է հիվանդանոցի ծառայություններ մատուցել CHLA-ի փոխարեն:
- B. Ինքնուրույն վճարող հիվանդներին պետք է տրամադրվի արժեքի գրավոր հաշվարկ մինչ CHLA-ն կմատուցի ծրագրված հիվանդանոցային ծառայությունները: Գրավոր հաշվարկը պետք է լինի այն լեզվով, որով խոսում է հիվանդի ընտանիքը: Շտապ օգնության ծառայությունների հետ կապված հաշվարկ չի տրամադրվելու:
- C. Երբ CHLA-ի կողմից որոշվի, որ հիվանդը այս ապահովագրության շրջանակներում իրավասու է Ֆինանսական օգնության համար, և այնքան ժամանակ, որքան այդ հիվանդը իրավասու կմնա այս ապահովագրության շրջանակներում, հիվանդը չպետք է ստանա որևէ վճարային հաշիվ, որը հիմնված կլինի շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ այլ խնամքի համար չզեղչված համախառն վճարների վրա: Դրա փոխարեն՝ նման հիվանդներին պետք է վճարային հաշիվ ներկայացվի ոչ ավելի, քան Ընդհանուր ներկայացվող հաշվի գումարը:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 10 / 17

D. Հայտատուին, ով իրավասու է այս ապահովագրության համաձայն Ֆինանսական օգնության համար, կառաջարկվի առանց տոկոսների, երկարաձգված վճարման պլան՝ CHLA-ի և հայտատուի կողմից համաձայնեցված պայմաններով՝ ելնելով վերջինիս ֆինանսական հանգամանքներից (ներառյալ Ընտանիքի ամսական համախառն եկամուտը և Կենսական հիմնական ծախսերը) և այլ համապատասխան գործոններից: Երկարացված վճարման պլանի նվազագույն ժամկետը կկազմի 12 ամիս: Եթե հայտատուն և CHLA-ն չեն կարողանում բանակցել փոխադարձ ընդունելի վճարման պլանի շուրջ, CHLA-ն հայտատուին կառաջարկի վճարման պլան, որի համաձայն ամսական վճարումները չեն գերազանցի հիվանդի Ընտանիքի ամսական համախառն եկամտի 10%-ը մեկ ամսվա ընթացքում՝ Կենսական հիմնական ծախսերը կրճատելուց հետո:

Երկարացված վճարման պլանը կարող է հայտարարվել CHLA-ի կողմից այլևս չգործող, եթե հիվանդը չկարողանա կատարել բոլոր հաջորդական վճարումները 90-օրյա ժամանակահատվածում: Նախքան պլանն այլևս չգործող հայտարարելը, CHLA-ն կամ իր հավաքագրման գործակալությունը կամ իրավասու անձը պետք է ողջամիտ փորձ կատարի հեռախոսով կապվել պացիենտի կամ պատասխանատու կողմի հետ և գրավոր ծանուցել, որ երկարացված վճարման պլանը կարող է չգործել այլևս, և երկարացված վճարման պլանի մասին կրկին բանակցելու հնարավորության մասին: Նաև պլանը չեղարկելուց առաջ, CHLA-ն կամ իր հավաքագրման գործակալությունը կամ իրավասու պետք է փորձի վերանայել պլանի կանխադրված պայմանները, եթե պահանջվի հիվանդի կամ պատասխանատու կողմի կողմից: CHLA-ն և իր հավաքագրման գործակալությունը կամ իրավասու անձը չպետք է անբարենպաստ տեղեկություններ հայտնեն սպառողական վարկի հաշվետվության գործակալությանը կամ վարկային բյուրոյին վճարման պլանի շրջանակներում չվճարելու համար մինչև երկարացված վճարման պլանը այլևս ոչ գործող հայտարարելը: Սույն պարբերության նպատակների համար հիվանդին ծանուցում և հեռախոսազանգ կարող են կատարվել հիվանդի կողմից նշված վերջին հեռախոսահամարով և հասցեով:

E. Եթե հայտատուն այլ կերպ տեղեկացված չէ, սույն ապահովագրության շրջանակներում տրամադրվող ֆինանսական օգնությունն ուժի մեջ կլինի մեկ ամբողջ տարվա ընթացքում՝ սկսած որոշման ամսվա առաջին օրվանից: CHLA-ն իրավունք է վերապահում այդ ժամանակահատվածում վերանայել հայտատուի ֆինանսական օգնության իրավունքը, եթե հայտատուի ֆինանսական վիճակի որևէ փոփոխություն կասկածի տակ է վերցվում:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 11 / 17

- F. CHLA-ի վճարային հաշիվների հաշվետվությունների միջոցով անհատները կտեղեկացվեն, որ Ֆինանսական օգնությունը կարող է հասանելի լինել և կտրամադրվի կոնտակտային բաժնի և կոնտակտային հեռախոսահամար:
- G. Եթե CHLA-ն հաշիվ է ներկայացնում հիվանդին, ով խնամքի տրամադրման պահին կամ դուրս գրվելուց հետո չի տրամադրել ապահովագրության ապացույց երրորդ կողմի կողմից, այդ ներկայացված հաշվի հետ միասին, CHLA-ն հիվանդին տրամադրելու է հստակ և պարզ գրավոր ծանուցում անգլերենով և այն լեզվով, որով խոսում է հիվանդի ընտանիքը, որտեղ ներառված կլինեն հետևյալ տեղեկությունները.
- Մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարների մասին հայտարարություն CHLA,
 - Պահանջ, որ հիվանդը կամ ներկայացուցիչը տեղեկացնեն CHLA-ին, արդյոք հիվանդն առողջության ապահովագրություն ունի, այդ թվում նաև՝ California Health Benefit Exchange-ի, Medicare-ի, Healthy Families-ի, Medi-Cal-ի կամ այլ ապահովագրություն,
Հայտարարություն, որ, եթե հիվանդը չունի առողջության ապահովագրություն, նա կարող է իրավասու լինել California Health Benefit Exchange-ի կամ նահանգի կամ վարչաշրջանի կողմից առաջարկվող ապահովագրության, ինչպես նաև, Medicare-ի, Healthy Families-ի, Medi-Cal-ի, California Children’s Services ծրագրի կամ այս Ֆինանսական օգնության համար:
 - Հայտարարություն, որտեղ կնշվի, թե ինչպես հիվանդները կարող են ստանալ ապահովագրության դիմումները California Health Benefit Exchange-ի կամ նահանգի կամ վարչաշրջանի կողմից առաջարկվող առողջության ապահովագրության, Medicare ծրագրի, Medi-Cal ծրագրի, Healthy Families ծրագրի և California Children’s Services ծրագրի համար, ինչպես նաև հայտարարություն, որ հիվանդանոցը տրամադրելու է այս դիմումները: Եթե հիվանդը չի նշում երրորդ կողմի վճարողի կողմից ապահովագրության մասին, կամ խնդրում է գեղջի համար կամ Բարեգործական խնամքի համար, ապա հիվանդանոցը պետք է

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 12 / 17

հիվանդին դիմում տրամադրի Medi-Cal-ի, Healthy Families ծրագրի կամ այլ պետական ծրագրերի համար: Այս դիմումը պետք է տրամադրվի նախքան դուրս գրվելը, եթե հիվանդը ընդունվել է և շտապ օգնություն կամ ամբուլատոր օգնություն ստացող հիվանդներին,

- iv. Տեղեկատվություն Ֆինանսական օգնության դիմումի վերաբերյալ, այդ թվում.
- Հայտարարություն որ, եթե հիվանդի ապահովագրությունը բավարար չէ կամ չի համապատասխանում, և նա համապատասխանում է որոշակի ցածր և միջին եկամտի պահանջներին, հիվանդը կարող է ստանալ Չեղչված խնամք կամ Բարեգործական խնամք,
 - CHLA-ի աշխատակցի կամ գրասենյակի անվանումը և հեռախոսահամարը, որտեղից հիվանդը կարող է տեղեկություններ ստանալ հիվանդանոցի Ֆինանսական օգնության ապահովագրության մասին, և ինչպես կարող է դիմել Ֆինանսական օգնություն ստանալու համար,
 - Հայտարարություն, որը փաստում է, որ հիվանդը դիմել է կամ սպասման վիճակի մեջ դիմում ունի մեկ այլ առողջապահական ծրագրի համար այն պահի դրությամբ, երբ հիվանդը դիմում է Բարեգործական խնամքի կամ Չեղչված խնամքի համար, չի բացառի ոչ մի ծրագրի համար դիմելու հնարավորությունը, և
- v. Հայտարարություն որ հիվանդն իրավասու է ստանալ ուղեգիր սպառողների աջակցության տեղական կենտրոն, որը գտնվում է իրավաբանական ծառայությունների գրասենյակում կամ սպառողների աջակցության այդպիսի կենտրոնների ցուցակ:

7. Միջոցների հավաքագրման քաղաքականության հետ կապված հարաբերությունները

- A. Միջոցների հավաքագրման բոլոր միջոցառումները իրականացվում են CHLA-ի կողմից, կամ CHLA-ի կողմից նշանակված վաճառողի կողմից, ինչպես օրինակ՝ հավաքագրման գործակալությունը: CHLA-ն կամ նրա անունից գործող միջոցների հավաքագրման

**Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:*

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 13 / 17

գործակալությունը կարող են անբարենպաստ տեղեկություններ հայտնել այն հիվանդների կամ այլ պատասխանատու անձանց մասին, ովքեր չեն վճարում հիվանդանոցի վճարային հաշիվները սպառողական վարկային գործակալություններին կամ վարկային բյուրոներին: Այնուամենայնիվ, CHLA-ն և նրա գործակալները չեն հայտնի նման տեղեկություններ որևէ վարկային գործակալության կամ վարկային բյուրոյի, մինչև CHLA-ն ողջամիտ ջանքեր չգործադրի (որոնք սահմանված են ստորև)՝ որոշելու համար, թե արդյոք հիվանդը իրավասու է համապատասխան ծառայությունների համար ֆինանսական օգնություն ստանալու համար: «**Ողջամիտ ջանքեր**» նշանակում է, որ CHLA-ն. (i) ծանուցել է հիվանդին և/կամ ընտանիքին ֆինանսական օգնության հասանելիության մասին դուրս գրվելուց հետո նամակագրության մեջ (այդ թվում նաև բանավոր հաղորդակցման միջոցով և ներկայացրել է այս ապահովագրության ամփոփ նկարագիրը պարզ լեզվով վճարային հաշվի հետ, որտեղ նշված է, թե ինչպես հիվանդը կարող է դիմել ֆինանսական օգնություն ստանալու համար և հիվանդին տեղեկացնում է CHLA-ի մտադրության մասին՝ հայտնել հիվանդի մասին վարկային գործակալությանը 30 օր հետո), տրամադրել է հիվանդին առնվազն **180** օր՝ դուրս գրվելուց հետո առաջին վճարային հաշիվը ներկայացնելուց հետո՝ ֆինանսական օգնություն ստանալու համար դիմելու և ժամանակին մշակել է այդ ժամանակահատվածում հիվանդից ստացված բոլոր դիմումները (սա չի սահմանափակում հիվանդի դիմելու հնարավորությունը այդ ժամանակահատվածից հետո), կամ (ii) որոշել է, թե արդյոք հիվանդը իրավունք ունի ֆինանսական օգնություն ստանալու՝ հիմնվելով լրացված դիմումի վրա: **180**-օրյա ժամկետը կերկարացվի, եթե հիվանդը սպասման վիճակում գտնվող բոլոր ունի, անկախ բժշկական ստուգում, անաչառ լսում կամ սպասման վիճակում գտնվող այլ բողոքարկում ծառայությունների ապահովագրության համար, մինչև բողոքարկման վերջնական որոշումը կայացվի այնքան ժամանակ, քանի դեռ հիվանդը ողջամիտ ջանքեր է գործադրում CHLA-ի հետ հաղորդակցվելու համար այդ բողոքարկման ընթացքի մասին: CHLA-ի Պացիենտների բիզնես ծառայությունների գրասենյակը վերջնական պատասխանատվություն է կրում որոշելու, որ CHLA-ն ողջամիտ ջանքեր է գործադրել որոշելու, թե արդյոք հիվանդը իրավասու է այս ապահովագրության շրջանակներում՝ նախքան սպառողական վարկային գործակալություններին կամ վարկային բյուրոներին հայտնելը:

- B. CHLA-ն կարող է պահանջել ծախսերի փոխհատուցում և հարկադրանքի միջոցներ երրորդ կողմի պատասխանատվության կարգավորող մարմիններից, իրավախախտներից կամ օրենքով սահմանված այլ պատասխանատու անձանցից:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
	ՎԵՐԱՆԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 12/01/2022		
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 14 / 17

- C. CHLA-ն պահանջում է, որ իր միջոցների հավաքագրման գործակալություններից յուրաքանչյուրը գրավոր համաձայնություն տա հետևելու CHLA-ի հավաքագրման ստանդարտներին և գործող շրջանակներին:
- D. Եթե անհատը փորձում է ստանալ օգնության իրավասություն այս ապահովագրության շրջանակներում և/կամ բարեխղճորեն փորձում է վճարել CHLA-ին չմարված հաշիվը՝ բանակցելով վճարման ողջամիտ պլանի շուրջ կամ կանոնավոր կերպով մասնակի վճարումներ կատարելով ողջամիտ գումարի չափով, CHLA-ն չի ուղարկի չվճարված հաշիվը միջոցների հավաքագրման գործակալությանը կամ այլ իրավասու մարմնի, մինչև այդ կազմակերպությունը չհամաձայնի հետևել Կալիֆորնիայի հիվանդանոցի արդար գնագոյացման կանոնադրության դրույթներին (California Health & Safety Code, բաժին 127400 և այլն):
- E. Այն գումարները, որոնք կուղեգրվեն միջոցների հավաքագրման գործակալություններ, կպարունակեն նվազեցված սակագները, որոնց համար տվյալ անձը իրավասու է սույն ապահովագրության շրջանակներում:
- F. Եթե ֆինանսական օգնության համար իրավասու անձը վճարում է իր ֆինանսական պատասխանատվության ընդհանուր գումարը գերազանցող գումարը, CHLA-ն գերավճարը ընդունելուց հետո 30 օրվա ընթացքում **կվերադարձնի** գերավճարը՝ օրենքով սահմանված տոկոսներով՝ սկսած այն օրվանից, երբ CHLA-ն ստացել է տվյալ անձի վճարումը և այն ճանաչվել է որպես վարկ: Այնուամենայնիվ, CHLA-ն, չի փոխհատուցի գերավճարը կամ վճարի տոկոսը, եթե նշված գումարը հինգ դոլարից պակաս է:
- G. Մինչ այս ապահովագրության շրջանակներում ֆինանսական օգնության համար իրավասու հիվանդի դեմ հավաքագրման գործողություններ սկսելը կամ նախաձեռնելը, CHLA-ն, CHLA-ի իրավասու անձը կամ որևէ այլ հիվանդի պարտատերն երաշխավորում է միջոցների հավաքագրման որևէ գործակալություն, պետք է հիվանդին գրավոր ծանուցումներ տրամադրեն, որոնք կլինեն Արդար հավաքագրման ծանուցման լեզվով, տեղեկատվություն տարածաշրջանում հասանելի ոչ առևտրային սպառողական վարկի խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ: Սույն ծանուցումը պետք է նաև ուղեկցվի որևէ փաստաթղթով, որտեղ կնշվի, որ կարող են տեղի ունենալ հավաքագրման միջոցառումներ:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Ռրակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 15 / 17

Արդար հավաքագրման ծանուցման լեզուն. «Համաձայն նահանգի և դաշնային օրենքի՝ պարտք հավաքագրողներից պահանջվում է ձեզ հետ արդար վարվել և արգելվում է կեղծ հայտարարություններ անել կամ բռնության սպառնալիքներ հնչեցնել, անպարկեշտ կամ գոեհիկ բառեր օգտագործել և ոչ պատշաճ կապի մեջ մտնել երրորդ անձանց հետ, այդ թվում նաև՝ ձեր գործատուի: Բացառությամբ արտասովոր հանգամանքների, պարտք հավաքագրողները չեն կարող կապվել ձեզ հետ 8:00 a.m-ից շուտ կամ 9:00 p.m.-ից հետո: Ընդհանուր առմամբ, պարտք հավաքագրողը չի կարող ձեր պարտքի մասին տեղեկություն տալ այլ անձի, բացի ձեր փաստաբանից կամ ամուսնուց: Պարտք հավաքագրողը կարող է կապվել այլ անձի հետ, որպեսզի ճշտի ձեր գտնվելու վայրը կամ իրականացնի վճիռը: Պարտքերի հավաքագրման միջոցառումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Դաշնային առևտրային հանձնաժողով՝ 1-877-FTC-HELP (382-4357) հեռախոսահամարով կամ դիմել առցանց՝ www.ftc.gov:

8. Այս ապահովագրության հաղորդակցումը

- Այս ապահովագրության հետ կապված ծանուցումները, ձևերը, նամակները, դիմումները կամ այլ փաստաթղթերը հասանելի կլինեն անգլերենով, իսպաներենով և այլ լեզուներով, որոնք օգտագործվում են բնակչության 5%-ից քիչ կամ 1000 հոգու կողմից, որոնք հավանաբար կապասարկվեն CHLA-ի կողմից: CHLA-ն կարող է նաև տրամադրել թարգմանչական օժանդակ միջոցներ և թարգմանչական ուղեցույցներ կամ օգնություն տրամադրել բարձրակարգ երկլեզու թարգմանիչների միջոցով՝ անգլերեն փաստաթղթերը լրացնելու և անգլերեն փաստաթղթերը հասկանալու համար:
- Յուրաքանչյուր հիվանդ կամ նրա ներկայացուցիչը որպես ստացիոնար հիվանդ ընդունելվելուց հետո կստանա գրավոր ծանուցում, որտեղ ներկայացված կլինեն տեղեկություններ Բարեգործական խնամքի և Չեղչված խնամքի հասանելիության մասին: Ծանուցման մեջ պետք է նշվեն տեղեկություններ այս ապահովագրության մասին, ինչպես նաև հիվանդանոցի աշխատակցի կամ գրասենյակի կոնտակտային տվյալները, որտեղից հիվանդը կամ ներկայացուցիչը կարող է լրացուցիչ տեղեկություններ ստանալ այս ապահովագրության վերաբերյալ: Այս նույն ծանուցումը կտրվի այն հիվանդներին, ովքեր շտապ օգնություն կամ ամբուլատոր խնամք կստանան, և ովքեր կարող են հաշիվ ստանալ նման խնամքի համար, բայց նրանք չեն ընդունվել հիվանդանոց: Ծանուցումը պետք է տրամադրվի անգլերենով և այն լեզվով, որով խոսում է հիվանդի ընտանիքը, առկայության դեպքում:

***Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:**

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Որակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
	ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 12/01/2022		
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 16 / 17

- C. Այս ապահովագրության հետ կապված ծանուցումները տեղադրված կլինեն հստակ և ակնհայտ տեղերում՝ հանրությանը տեսանելի, ներառյալ, բայց չսահմանափակվելով բոլոր հետևյալ տեղերում՝ շտապ օգնության բաժանմունքում, հաշիվների ներկայացման գրասենյակում, ընդունարանում և ամբուլատոր հաստատություններում: Այս փակցված ծանուցումներում կբացատրվի, որ CHLA-ն բազմազան տարբերակներ ունի, այդ թվում՝ Ֆինանսական օգնություն այն անձանց համար, ովքեր ապահովագրված չեն կամ ում ապահովագրությունը չի բավարարում: Այս ծանուցումներում նշված կլինեն կոնտակտային գրասենյակը և հեռախոսահամարը, որով անձը կարող է զանգահարել այս Ֆինանսական օգնության ապահովագրության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու և Ֆինանսական օգնություն ստանալու համար դիմելու համար:
- D. Այս ապահովագրության ծանուցումը, այդ թվում՝ կոնտակտային համարը, կտարածվի CHLA-ի կողմից այլ տարբեր միջոցներով, ներառյալ, բայց չսահմանափակվելով հիվանդների վճարային հաշիվներում ծանուցումների հրապարակմամբ: CHLA-ն կհրապարակի այս բարեգործական խնամքի ապահովագրության ամփոփագիրն իր կայքում, բրոշյուրներում, որոնք առկա են հիվանդներին հասանելի վայրերում և համայնքի այլ վայրերում, որոնք սպասարկվում են հիվանդանոցի կողմից՝ CHLA-ի ընտրությամբ:
- E. Եթե CHLA-ի աշխատակիցները ողջամտորեն կարծում են, որ անձը չունի հիվանդանոցային ծառայությունների դիմաց վճարելու հնարավորություն, պետք է տեղեկացնեն նրան, որ կարող է հասանելի լինել Ֆինանսական օգնություն և ցույց տան նրանց ծանուցումները, որոնք նկարագրված են այս ապահովագրության մեջ: Ֆինանսական օգնության դիմումները հասանելի կլինեն նաև CHLA-ի կողմից օգտագործվող բոլոր արտաքին հավաքագրման գործակալություններին՝ բաժանելու համար այն անձանց, ովքեր, ըստ հավաքագրման գործակալությունների, կարող են ստանալ Ֆինանսական օգնություն:

9. Փաղտնիություն

- A. CHLA-ն այս ապահովագրության շրջանակներում Ֆինանսական օգնության համար դիմած հայտատուներից ստացած բոլոր տեղեկությունները կպահպանի որպես գաղտնի տեղեկություններ: Ֆինանսական օգնության դիմումի և հաստատման գործընթացի

**Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:*

	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԵՌՆԱՐԿ		
	ԱՆՎԱՆՈՒՄ՝ Ֆինանսական օգնություն (Բարեգործական խնամք և զեղչված խնամք)		
	ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 04/27/2005	ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 03/01/2023	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, Ռրակի բարելավման հանձնաժողովի, Բժշկական գործադիր կոմիտեի, Տնօրենների խորհրդի կողմից
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ ՖԻՆ – 006.0	ԳԼՈՒԽ՝ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - ՖԻՆԱՆՍՆԵՐ		Էջ 17 / 17

շրջանակներում ձեռք բերված Դրամական ակտիվների վերաբերյալ տեղեկությունները կպահվեն առանձին ֆայլում, որը կպահվի առանձին այն տեղեկություններից, որոնք կարող են օգտագործվել CHLA-ի պարտքը ստանալու համար: Այդ ֆայլի բոլոր տեղեկությունները չեն հասանելի լինի պարտքերի հավաքագրման մեջ ներգրավված աշխատակազմին: Սակայն այս ապահովագրության ոչ մի կետ չի արգելում պարտքերի հավաքագրման գործընթացում օգտագործել CHLA-ի, նրա հավաքագրման գործակալությունների կամ իրավասու անձանց կողմից ֆինանսական օգնության դիմումի գործընթացից անկախ ստացված տեղեկությունները:

ԿՑՈՐԴՆԵՐ.

1. [ՖԻՆ – 006.1 CHLA ֆինանսական օգնության դիմումը \(անգլերեն\)](#)
2. [ՖԻՆ – 006.2 CHLA ֆինանսական օգնության դիմումը \(խալաներեն\)](#)
3. [ՖԻՆ – 006.3 Հավելված Ա Մատակարարների ցանկը](#)
4. [ՖԻՆ – 006.4 Հավելված Բ Ընդհանուր գումարը, որը ներկայացվում է վճարային հաշվի մեջ](#)
5. [ՖԻՆ – 006.5 Հավելված Գ Իրավասության ծածկաթերթիկ](#)

ՀՂՈՒՄՆԵՐ.

1. California Health & Safety Code, Sections 127400 to 127446
2. California Family Code, Section 297
3. California Health & Safety Code, Section 1339.585
4. 26 U.S.C. 501(r)
5. Hospital Fair Pricing Policies (HFPP) Law - AB 774
6. Emergency Physician Fair Pricing Policies (EPFPP) Law
7. CHLA Policy [COMP - 023.0 EMTALA \(Screening, Stabilization, and Management of Emergency Transfers\)](#)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ.

Ֆինանսական գծով գլխավոր նախագահ

**Երբ այս ապահովագրությունը տպագրվի կամ այլ կերպ տարածվի CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանից, այն այլևս չի համարվում վերահսկվող փաստաթուղթ: Խնդրում ենք ծանոթանալ այս ապահովագրության Էլեկտրոնային տարբերակին CHLA-ի դրույթների ու ընթացակարգերի գրադարանում, քանի որ սա կարող է թարմացված տարբերակը չլինել:*